ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Ծնվել է 1959թ. դեկտեմբերի 24, Երևանում:

Կրթությունը՝

1982թթ. - ավարտել է Մոսկվայի Ժողովուրդների բարեկամության Համալսարանի մաթեմաթիկայի ֆակուլտետը:

1986թ. - ավարտել է Երևանի պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետը**:**

Աշխատանքային գործունեությունը

1984- 1990թ. - Կառավարման ավտոմատացված համակարգերի Երևանի գիտահետազոտական և նախագծային ինստիտուտում (ՔԿԱՀԵՆԻ) ճարտարագետ-ծրագրավորող:

1988-1990թթ. - մասնակցել է Ղարաբաղյան շարժմանը: ղեկավարել է Հայոց համազգային շարժման լրատվական կենտրոնը, հրատարակել կենտրոնի տեղեկագրերը:

1990-1991թ. - եղել է ՀՀ ԳԽ նախագահի օգնական:

1991թ. - ՀՀ ԳԽ նախագահության և Նախարարների խորհրդի համատեղ որոշմամբ գործուղվել է ԱՄՆ (ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններ հիմնելու նպատակով):

1992-1993թթ. - ԱՄՆ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան:

1992-1996թթ. - ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ:

1996-1998թթ. - ՀՀ արտաքին գործերի նախարար:

1998-2000թթ. - «Հայագրոբանկի» նախագահի գլխավոր խորհրդական

2000-2002թթ. և 2008-2012թթ. - եղել է Հայոց համազգային շարժման վարչության նախագահ:

2001-2004թթ. - Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի հիմնադիր անդամ (հայ և թուրք ականավոր գործիչներից կազմված անկախ խումբ):

2002թ. - աշխատել է մարդու իրավունքների, ժողովրդավարության, տարածաշրջանային համագործակցության հարցերով զբաղվող ոչ կառավարական կազմակերպություններում:

2008թ. - նախագահական ընտրություններում եղել է նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի կենտրոնական նախընտրական շտաբի պետ:

2012-2017թթ. - ՀՀ ԱԺ պատգամավոր համամասնական ընտրակարգով «Ժառանգություն» կուսակցությունից, ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ:

2017թ. - Դանիայի Թագավորությունում և Նորվեգիայի Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան

2019թ. մարտից - Շվեդիայի Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան

Օտար լեզուներ՝

Ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն:

Դիվանագիտական աստիճանը՝

Արտակարգ և լիազոր դեսպան:

Ընտանեկան կարգավիճակ՝

Ամուսնացած է, ունի մեկ զավակ:

2023 թվականի սեպտեմբերի 4-ի ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Լեհաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Վարշավա):